06 օգոստոսի 2024թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ԼԱՎԱՆՆԱ ՍՊԸ-ի տնօրեն
Արտակ Աբրահամյանին

Հարգելի Արտակ Աբրահամյան,

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի (այսուհետ՝ Գնորդ) և ԼԱՎԱՆՆԱ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024թ.-ի հուլիսի 12-ին կնքվել է Ապրանքի մատակարարման **ԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/21-1** ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքը: Սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չի մատակարարվել տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ Արմավիրի մարզ Արմավիրի համայնքապետարանը հարկադրված է 2024թ.-ի օգոստոսի 07-ից Պայմանագիրը միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 5 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 89400 (ութսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամի և 59600 (հիսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ Ֆինանսների նախարարություն 900335201092)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն ԼԱՎԱՆՆԱ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հարգանքով՝

Արմավիրի համայնքի ղեկավար՝ **Վ. Սարգսյան**